

բանք, բայց ցուցակները կորսուած լինելով՝ յայտնի չեղաւ. քէ ով էին վնասուող մարդիկը. իսկ նիւանդանոցը եւլած մարդկանցմէ հնար չեղաւ ստուգիւ իմանալ, որովհետեւ նոքա տաճիկ եւ հոգում էին՝ Տրապիզոնէն եկող, եւ մէկը Մշեցի Հայ, ուստի անծանօթ էին Կովկասու բնակիչ Հայերուն։ Կեր. Առաջնորդը անծամբ գնաց տեսաւ հիւանդները, հարցմունքներ քրտաւ, միտքարեց, բայց ստոյգ տեղեկութիւններ չկրցաւ առնուլ։

Մէկ ամիս յետոյ հազիւ առնուեցաւ Փոքիի Պաշտօնարանէն անուանական ցուցակը, յորում երեսցան այն երեք Կորեցի Հայերը, *Տէր Դաւթեան, Խիբարով, Օրէլով*, եւ Ախլցիսացիք Ս. Սահակեան, Խ. Շիշմանեան եւ Մ. Փօստեան. երեք հոգի եւս՝ *Մուրվանով, Նազարով* եւ *Զիսրիքով*՝ զեւ յայտնի չեն մեզ քէ որ տեղացի են, քէ եւ մականուններուն նայելով՝ պէտք է սոքա եւս լինին Ախլցիսացի՝ Հայ-կարօլիկ ժողովրդէն։

Հիւանդանոցը դրուածներուն մեծ մասը առողջացան՝ փութաջան խնամօք եւ աշակուրջ հսկողութեամբ տերութեան բժիշկներուն, եւ հոգացողութեամբ ամենայն պիտոյից նոցա. մնացեալներուն մէջէն երկրորդ նաւապետին երկու ոտքերը եւ ձեռքերուն ինք մասը հարկ եղեր է կտրուել։ Նոցա մէջ գտնուած հայազգի Մշեցի Գրիգոր անունով երկտասարդ մարդուն եւս երկու ոտքերը կտրեցին, բայց ինքը բաւական առողջ է, եւ քանի մը ամսէն փայտէ ոտքերով պէտք է զրկուի ողորմելին իրեն հայրենիքը. երկու Տաճկաց ալ ոտքերուն քանի մը մատերը կտրեցին։

Իվերջոյ այս եւս չմոռնամք իշխել, որ երբ Թեոդոսիոյ մէջ գտնուող Օսմանեան Դրան հիւպատոսի գործակատարը՝ իրենց հպատակ հիւանդներուն խեղճութիւնը յայտնեց հեռագրով Պօլսոյ կառավարութեանը, հրաման ընդունեցաւ որ առանց խնայելոյ՝ հիւանդներուն ամենայն հարկաւոր պիտոյքը հոգայ, եւ ամէն մէկուն ախորժակին յարմար կերակուր, մինչեւ անուշեղենը եւս առատօրէն շնորհէ. եւ այսպէս մինչեւ ցայժմ մեծ խնամօք նոցա ամենայն պակասութիւնը կ'հոգացուի։

Կովկասու կողմէն եկող ճանապարհորդաց ապրանքներուն ցուցակն եւս այս է, յորմէ կիմացուի ուս ինչ ունեցածը. Օրէլով,

Խիբարով, } իրենց անունովը բան մը չունին.
Տէր Դաւիթով, }
Մուրվանով, }
Զիսրիքով, }
Նազարով, — ունի 4 կտոր ընկուզի փայտ եւ 2 *բայ* ⁽¹⁾ մօրք, որ զրկուած է Կերջ։

Ս. Սահակով, — ունի 14 *բայ* մօրք. ետ դարձուցեր են Կերջ, որովհետեւ ապրանքը հոն պիտի հասնի եղեր։

Շիշմանով, — մէկ *բեմպէլիք*, զրկուած է Օտեսաս։

Փօստեանով, — մէկ *բեմպէլիք*, 5 սնտուկ զանազան ապրանք. 21 *բայ* մօրք, 2 տօպրակ *բեմպէլիք*, 6 *բայ*

լուսխոտ (*խիբի օրու*). 2 սնտուկ ապրում քել, եւ երկու *բայ* կեռասի ձիւղ (*չըպուխ քիբազ*). Ինչ տեսակ լիւնեյր յայտնի չէ, այլ այսպէս գրած է *парок*, որ է ձիւղ կամ զաւազան։

2եմբ կարող վերջացընել այս ցաւալի տեղեկութիւնները առանց յայտնելու մեր փափաքը, որ Որեստի փորձանքովը իրենց ընտանիքէն՝ հայրենիքէն ու կեանքերէն զրկուած, եւ այն գրեթէ անմարդաբնակ ծովեզերքը Թաղուած Հայերուն ազգականները փոյթ ունենան՝ կամ նոցա մարմինները հանել տալով՝ ազգային եկեղեցւոյ գերեզմանատուն մը փոխադրել տալու, եւ կամ գոնէ նոյն տեղը նոցա վրան շիրիմ կանգնելու կամ գերեզմանաքար մը ձգելու՝ հանդերձ վայելուչ արձանագրութեամբ։

ՔԱՂԱՒԱՆ 30ՐԱԳՐՈՒԹԵՆԷ 1858 ԱՄԻՆ.

(Շարայարութիւն.)

Յունիսի 20. — Վիճակիս Գերապատիւ Առաջնորդը անծամբ երթալով ինսիսիշեւան, աւարտեց ամենայն յաջողութեամբ եւ հասարակաց հաւանութեամբ՝ այն եկեղեցական դրամոց խնդրոյն ծանր գործը, որ քաղաքին ժողովրդօրը մէջ քանի՜ տարիէ իվեր երկպառակութեան եւ զանազան խռովութեանց պատճառ էր։ — Այն խաղաղութեան պտուղն եղաւ նաեւ Խալիպեան Յարութիւն Աղային ազգային ուսումնարանի մը համար ըրած երեւելի նուիրատուութիւնը, որ արդէն յայտնի է ամենուն, եւ մեր ուրիշ անգամ եւս տեղնիտեղը պիտի հրատարակեմք՝ հանդերձ վաւերական եւ հաւաստի վկայութեամբք։

Յունիսի 21. — Առաջնորդական Ատենիս Անդամ Աբէլ Վարդապետն Մխիթարեան, ըստ իւր խնդրանացը արձակեցաւ պաշտօնէն եւ ուղեւորեցաւ իՍ. Էջմիածին։

Յունիսի 28. — Ընդհանուր շրջաբերական հրամանաւ հրատարակուեցաւ Վիճակիս քահանայից, եւ նոցա ձեռքովը ծանուցուեցաւ ամենայն ժողովրդականաց նախիշեւանի, Պեսսարապիոյ եւ Տաւրիկեան գաւառիս, Թէ Թիֆլիզեցի Քալինէ Զաւլաճեան բարեպաշտ իշխանուհին, աստուածահաճոյ նուիրատուութեամբ ընծայեր է յանուն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի հինգ հազար ռուպլի արծաթ. այս գումարը այժմէն Թիֆլիզու հասարակաց խնամարկութեան դրամանոցը աւանդեր է, եւ սուրբ Աթոռոյն անունով առած մուրհակը Սիւնիֆոդոսին զանձարանին յանձնելով՝ պայման դրած է Էջմիածնի Սիւնիֆոդոսին հետ որ նախ՝ մինչդեռ ինքը կենդանի է՝ այս գումարին տոկոսիքը իրեն տրուի, որպէս զի անկարօտ ապրի. իսկ իւր մահուանէն ետքը մնայ սուրբ Աթո-

(1) *Թայ*, հակ. товарище жето небольшое. — *Բեմպէլիք*, մեծ պայտակ, *հեպիլիկ*, խուրճ, կամ *խուրճիկ*, քերտայալ сукка. — Սնտուկ, *սանտրզ*, *шнурок*.

ռոյն: Երկրորդ՝ տարին միանգամ իւր հոգւոյն հանգստեանը համար մատուցուի սուրբ պատարագ. եւ երրորդ՝ մէկ աղբատ քահանայի կամ աշխարհականի որդի ընդունուի սուրբ էջմիածնի ուսումնարանը ձրի՝ իւր հոգւոյն յիշատակ, եւ լինի վերջը ազգին պիտանի եկեղեցական:

Օգոստոսի 4. — Թէոդոսիոյ Հրեշտակապետաց եկեղեցւոյ դպիրն Յակոբ Մովսիսեան Թորոսեանց, Ս. Էջմիածնի Սիւնհոգոսին հրամանաւր Թուսաց Տէրութեան հպատակութեան երդում ընելով՝ ընդունուեցաւ Վիճակիս եկեղեցականաց կարգը:

Օգոստոսի 7. — Նոյն եկեղեցւոյն քահանայ Տէր Մարտիրոսը ճանվերտեան նշանակեցաւ Երկրորդ Անդամ Առաջնորդական Ատենիս՝ ըստ հրամանի Տեառն Տեղակալի Առաջնորդութեան Վիճակիս:

Օգոստոսի 11. — Սիմֆերովոյ քաղաքի եկեղեցւոյն երէցփոխան Մարտիրոս Աղայն Թոսուհեանց, եւ Օրհէյի եկեղեցւոյն երէցփոխան Յարութիւն Աղայն Յարութիւնեանց, իրենց իննամեայ հաւատարիմ եւ արդիւնաւոր ծառայութեանը համար վարձատրեցան յՕգոստափառ Կայսերէն ամենայն Թուսաց արծաթեայ մետալի. Ս. Աննայի ժապաւէնի վրայ, եւ այս պատուանշանները ներքին Գործոց Ոստիկանը յուղարկեց առ Տեղակալն Առաջնորդութեան Վիճակիս, որ եւ իսկոյն հասոյց զանոնք այն մեծարգոյ երէցփոխանաց:

Օգոստոսի 11. — Ըստ հրովարտակի Սիւնհոգոսին սրբոյ էջմիածնի՝ Նախիջեւանի բնակիչներէն Մանուէլ Տապախեանց, Պետրոս Նախաշեանց եւ Յակոբ Տէր-Փանոսեանց երիտասարդներն ընդունուեցան Վիճակիս եկեղեցականաց կարգը:

Օգոստոսի 14. — Դասաւարեան Տէր Խաչատուր քահանային որդիքը՝ Գէորգ, Մանուկ եւ Կարապետ, ըստ խնդրոյ իւրեանց եւ ըստ տնօրէնութեան Սիւնհոգոսին սրբոյ էջմիածնի արձակեցան յեկեղեցական կոչմանէ, եւ դառեցան իշարս աշխարհականաց Նախիջեւանի:

Սեպտեմբերի 25. — Նախիջեւանի Հոգեւորական Կառավարութեան առաջին Անդամ Տէր Գաբրիէլ քահանայն ձաւճաւեանց՝ անձնական տկարութեանը պատճառաւ արձակեցաւ ըստ խնդրոյ իւրում այն պաշտօնէն՝ ընդունելով Առաջնորդական Ատենիս շնորհակալութիւնը իւր ջերմեռանդ եւ հաւատարիմ ծառայութեանը համար, իսկ նորա տեղը նշանակուեցաւ Տէր Կարապետ քահանայն Զօլախեանց:

Հոկտեմբերի 12. — Թէոդոսիոյ մէջ հաստատուած ազգային ուսումնարանին հանդիսաւոր

բացումը կատարուեցաւ. որով սկսաւ ուսումնարանը առաջ երթալ առժամանակեայ վարձուած տան մէջ, մինչեւ որ Խալիպեան Յարութիւն Աղային ծախիւքը շինուելու ուսումնարանը աւարտի:

Դեկտեմբերի 3. — Ս. Էջմիածնի Սիւնհոգոսին հրամանաւր, ըստ առաջարկութեան Նախիջեւանի Հոգեւորական Կառավարութեան, մահմետական Մուրատ Հասան օղլուն՝ յետ ինքնայոժար փափաքանօք կրթելոյ իմարկաւոր սկզբունս քրիստոնէական հաւատոյ՝ ըստ ուղղափառ դաւանութեան Հայաստանեացս եկեղեցւոյ, մկրտեցաւ Նախիջեւան քաղաքին մէջ եւ կոչուեցաւ Դրիգոր:

Դեկտեմբերի 11. — Ըստ հրամանագրի Սիւնհոգոսին Ս. Էջմիածնի, որ յ7 Նոյեմբերի ընդ համարաւ 2099, շրջաբերական հրամանաւ հրատարակեցաւ Վիճակիս ամենայն ժողովրդոց՝ Թէ Օգոստափառ Կայսրն ամենայն Թուսաց բարեհասեր է հաստատել զընտրութիւն ընդհանուր Պատրիարքին եւ Կաթողիկոսին ամենայն Հայոց, որ է Տէր ՄԱՏԹԻՍ Ա, Սրբազան Արքեպիսկոպոսն, որ երբեմն Պատրիարք էր Կոստանդնուպօլսոյ: Ընդնմին եւ հրամայեցաւ որ նոյն օրը ամենայն եկեղեցեաց եւ վանորէից մէջ Դոհացողական մաղթանք մը կատարուի փառաւոր հանդիսիւ՝ ինչպէս Վեհափառ Կայսեր բարօրութեան եւ երկարակեցութեան համար, նմանապէս եւ Աստուածընտիր Կաթողիկոսին համար, որպէս զի երկարատեւ կենօք եւ ուղիղ վարդապետութեամբ հովուէ Հայաստանեայցս սուրբ եկեղեցին, եւ յայնմ հետէ վիճակիս բոլոր եկեղեցեաց եւ վանորէից մէջ սրբազան Հայրապետին անունը սկսի յիշատակուիլ ըստ պատշաճի՝ սահմանեալ աղօթքներուն եւ քարոզներուն մէջ:

Դեկտեմբերի 29. — Առաջնորդական Ատենիս տնօրէնութեամբը պատուիրեցաւ ամենայն քահանայից Վիճակիս, որ եթէ իրենց ընչաւէտ եւ բարեպաշտ ժողովուրդներէն ոմանք աստուածահաճոյ գործի մը համար յօժարին նուիրատուութիւն ընել, քահանայք յորդորեն զնոսա որ այնպիսի գումարը սահմանեն Նախ՝ իրենց տեղի եկեղեցւոյն բարեզարդութեանը, եւ Երկրորդ՝ յօգուտ եւ իպահպանութիւն ժողովրդական դպրոցի նոյն քաղաքին. որովհետեւ այն դպրոցներէն կսպասուին ըստ ժամանակին բարեպաշտ եւ բարեկիրթ ժողովրդականներ իպայծառութիւն ազգիս՝ բարոյական եւ ուսումնական յառաջադիմութեամբ, նմանապէս եւ ընտիր եկեղեցականք, որոց ո՛րքան կարօտութիւն լինելը յայտնի է ամենուն: